

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի շնորհավորական ուղերձը Գրադարանավարի օրվա առթիվ

07.10.2021

Գրադարանային համակարգի հարգելի՛ աշխատակիցներ, շնորհավորում եմ բոլորիդ մասնագիտական տոնի՝ Գրադարանավարի օրվա առթիվ: Այն նվիրվածությունն ու անտրտունջ աշխատանքը, այն մոգական մթնոլորտը, որ առկա է գրադարանների պատերի ներսում, ձեզ՝ գրադարանային համակարգի աշխատակիցներիդ, արժանի է դարձնում առանձնահատուկ հարգանքի և շնորհակալության անկեղծ խոսքերի: Անշուշտ ամեն օր չէ, որ խոսվում է գրադարանավարների մասին, ինչը, սակայն, որևէ կերպ չի կարող նվազեցնել այն կարևորությունը, որն ունեն այս անհրաժեշտ մասնագիտության տեր մարդիկ: Դուք հաճախ ընթերցողի համար հանդես եք գալիս որպես խորհրդատու, որպես առաջնորդ՝ հարգանք ձևավորելով գրի ու գրականության հանդեպ: Հենց ձեր ջանքերի շնորհիվ է, որ ժամանակակից տեխնոլոգիաների զարգացման դարաշրջանում գիրքը, միևնույն է, մնում է անփոխարինելի արժեք, իսկ գրադարանը՝ յուրատեսակ գանձարան: Վստահ և լիահույս եմ, որ ձեր շնորհիվ գրադարանների ընթերցասարահներից երբևէ չի պակասի ընթերցողի ներկայությունը և դուք ձեր կարևոր առաքելությամբ կշարունակեք վառ պահել սերը դեպի գիրքը: Մաղթում եմ քաջառողջություն և հաջողություններ՝ ձեր պատասխանատու և նվիրական գործում:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյան